

**ԱՅՐ ՄԻ ՀԱԽՈՒՄՅԱՆՆԵՐԻ
ՇԱՌԱՎՂԻՑ**

ԱՅՐ ՄԻ ՀԱԽՈՒՄՅԱՆՆԵՐԻ ՇԱՌԱՎՂԻՑ

*Մերգեյ Արշակի Հախումյանի
90-ամյա հոբելյանի առթիվ*



«ԿԱՃԱՌ» ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՇՈՒՇԻ 2018

ԿՅԱՆՔԻՍ ՀՈՒՇԵՐԻՑ

Գալիք սերունդներին

83 փարեկանում որոշեցի գրավոր շարադրել իմ կյանքի անցած ուղին, հաշվի առնելով, որ իմ զավակները, թոռները, ծոռները և հաջորդ սերունդները իրենց ծնողներից ժառանգած գեներին կավելացնեն իմ հուշերում շարադրված ընդօրինակման ենթակա առանձին դրվագներ և կջգրեն իրենք ևս դառնալ երկարակյացներ:

*Ձերն սիրով և բարի մաղթանքներով
Սերգեյ Հախումյան*


ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Մանկությունս հիշում եմ սկսած 1932 թվականից: Չորս տարեկան էի (ծնվել եմ 1928 թվականին), երբ գյուղ եկավ Վանյա անունով լուսանկարիչը և բնամթերքով վճարելու դիմաց լուսանկարեց գյուղի բնակիչներին: Իմ ծնողները ևս լուսանկարել տվին ինձ և քրոջս՝ Ռոզային, որը երեք տարով մեծ էր ինձնից:

1935 թ. նախօրյակին դպրոցի տնօրեն Հ. Մամվելյանը ներկայացավ մեր հարևան Գրիշա Ղազարյանի տուն, որպեսզի նրա աղջկանը՝ Ասյային ընդգրկի առաջին դասարանցիների ցուցակի մեջ: Այդ ժամանակ ես յոթ տարեկան էի, լացելով խնդրեցի հորս, որ իմ անունն էլ գրել տա առաջին դասարանցիների ցուցակի մեջ: Թեև այդ ժամանակ ութ տարեկանը լրացածներին էին ընդունում առաջին դասարան, հորս խնդրանքով դպրոցի տնօրենն ինձ էլ ընդգրկեց առաջին դասարանցիների ցուցակում և մեկ ամսից հետո, ուրախ տրամադրությամբ սկսեցի հաճախել առաջին դասարան:

Հայրս այդ ժամանակ նորաստեղծ գյուղական խորհրդի նախագահն էր: Ապրում էինք հորս հայրական տանը, որը բաժանված էր երկու մասի: Մյուս կեսում ապրում էր իմ հորեղբոր բազմանդամ ընտանիքը:

Մայրս աշխատում էր մետաքսագործական ֆաբրիկայում, համարյա առավոտից մինչև երեկո: Ես և քույրս համապատասխանաբար 7 և 10 տարեկանից սկսած, համարյա առանց ծնողների խնամքի, ինքներս էինք սպասարկում մեզ:



Սերգեյ Հախումյան

Հիշում եմ՝ այդ տարիներին առատ ձյուն էր տեղում և ծնողներն իրենց երեխաներին էշերի վրա նստեցրած դպրոց էին տանում, որը գտնվում էր գյուղի կենտրոնից գրեթե 500 մետր հեռավորության վրա:

1935-1940-ական թվականներին, մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը, գյուղն ուներ 800-ից ավելի բնակիչ: Ընդամենը չորս դասասենյակներից բաղկացած յոթնամյա դպրոցում սովորում էին 300-ից ավելի աշակերտներ, նստարաններին նստում էին երեքական աշակերտներ, պարապմունքները երկհերթ էին:

Ես առաջին օրվանից սիրեցի ուսումը, գիրքը և մինչև դպրոցն ավարտելը՝ 1941-1942 ուս. տարին, միշտ ստանում էի գերազանց գնահատականներ:

Առաջին դասարանի դասվարն էր մեր բարեկամ և հարևան Բյուրբյուլ Բարսեղյանը: Նա համարյա ամեն օր մեր տուն էր գալիս և տնեցիների մոտ միշտ գովում ինձ: Գուցե և այդ գովեստն է ոգևորել ինձ, որ հետագա բոլոր դասարաններում սովորում էի միայն գերազանց գնահատականներով:

Դժվարին էին 1930-40-ական թվականները: Մարդիկ ապրում էին աղքատիկ կյանքով, հագնում հնամաշ հագուստներ՝ առավոտից մինչև երեկո աշխատելով հանդերձ: Դպրոցականները գրքերը, թանաքամանները, մատիտները տեղավորում էին կտորից կարած տոպրակների մեջ: Դպրոցում աշխատող ուսուցիչներից ոչ մեկը բարձրագույն կրթություն չուներ: Մակայն տնօրեն Հ. Սամվելյանը, ուսմասվար Ն. Կարապետյանը, մաթեմատիկայի ուսուցիչ Ա. Պետրոսյանը, քիմ-բիոլոգիայի ուսուցիչ Մ. Կարապետյանը, Վ. Նաիրյանը, Ե. Ներսիսյանը, Բ. Բարսեղյանը, Ե. Գրիգորյանը և մյուսները նվիրված էին մատաղ սերնդին կրթելու և դաստիարակելու գործին:

1937 թ. ձերբակալեցին գյուղի մետաքսագործական ֆաբրիկայի տնօրենին՝ Վանուիին, փակեցին ֆաբրիկան, քանդեցին գործվածքային սարքավորումները, աշխատողներին ուղարկեցին իրենց տները, բայց մոտ 20-30 կանանց, որոնց թվում և իմ մորը, հրավիրեցին աշխատելու Մտեփանակերտի տեքստիլ ֆաբրիկայում: Նրանց բավարարեցին հանրակացարաններով և գյուղ էին բերում ավտոբուսով շաբաթը մեկ անգամ: Մեր տանն ապրելու պայմաններն ավելի վատացան: Ես և հայրս մնացինք 12 ամյա քրոջս հույսին: Նա էր պատրաստում կերակուրներ, լվանում հագուստները և այլն: Հիշում եմ, երբ շաբաթը մեկ անգամ գիշերվա ժամերին տուն էր գալիս մայրս, մենք իսկույն արթնանում էինք, հաճույքով վայելում գիշերվա կեսին մորս բերած քաղցրավենիքները: Այդ գիշերը մեզ համար տուն էր:

Երբ 1941-ին ֆաշիստական Գերմանիան հարձակվեց ԽՍՀՄ-ի վրա, երկիրը ստիպված հայտարարեց համընդհանուր զորահավաք: Բանակ գո-

րակոչվեցին մինչև 50 տարեկան տղամարդիկ: Մեր գյուղից զինակոչվեցին 300 հոգի, որոնց թվում արական սեռի բոլոր ուսուցիչները, գրասենյակային աշխատողները, անասնապահները, սայլապանները: Այդ տարիներին չկար ավտոմեքենա, դրանց փոխարեն կոլտնտեսությունն ուներ 50-60 սայլ: Հայրս 51 տարեկան էր, բանակ չզինակոչվեց: Սկսվեցին պատերազմական դժվարին տարիները: Տղամարդկանց փոխարինեցին կանայք: Նրանք դարձան հնձվորներ, անասնապահներ, սայլապաններ, թթահավաքներ և այլն:

Հայրս, որ այդ տարիներին կուսկազմակերպության քարտուղարն էր, միաժամանակ կատարում էր դարբնի պարտականություններ: Նա առանձնապես մեծ հոգատարությամբ էր վերաբերվում զորակոչված ամուսինների կանանց: Կոլտնտեսությունների ունեցած սննդամթերքները, հացահատիկը, անասնամթերքները, ձիաբուծական ֆերմայի բոլոր ձիերը ուղարկվեցին ռազմաճակատ: «Ամեն ինչ ռազմաճակատի համար». այսպիսին էր նշանաբանը: Հիշում եմ՝ հայրս մեր տան ներքնակներից երկուսը դատարկեց և բուրդը հանձնեց տուրք հավաքողներին: Երբ մայրս դժգոհություն հայտնեց, հայրս պատասխանեց.

- Բուրդը փոխարինիր բամբակով, յուլա գնանք, հետո լավ կլինի:

Չանգվածային սով առաջացավ գյուղերում: Մեր գյուղում սովից մահացավ մի մարդ: Մարդիկ ուտում էին անասուններ, առանց հացի տարբեր կանաչեղեն և այլն:

Պատերազմական տարիներին թիկունքում դժվարություններ էին կրում ոչ միայն մեծահասակները, այլև դպրոցականները: 12-15 տարեկան երեխաները պարտադիր մասնակցում էին թթահավաքի աշխատանքներին: Դույլերը ձեռքներիս հավաքում էինք գետնին թափված թուրք և հանձնում կոլտնտեսության բրիգադներին: Դաշտում հավաքում էինք թափված հասկերը, հնձած խոտը և այլն:

Ավելի դժվար էր հաց հայթայթելու գործը: Գյուղի տարեց մարդիկ, մի քանիսը միասին, ավանակները բարձած կարտոֆիլով՝ գնում էին հարևան գյուղերը, որոնք գտնվում էին 30-60 կմ հեռավորության վրա, փոխանակում ցորենի կամ գարու հետ, բերում տուն: Գնալ գալը տևում էր 5-6 օր և կապված էր վտանգների հետ: Հիշում եմ՝ հայրս զբաղված լինելու պատճառով ինքը չէր գնում: Ինձ, 12-13 տարեկան հասակում, դնում էր մեծահասակ մարդկանց հետ և կարտոֆիլով բարձած ավանակով ճանապարհում թուրքական գյուղերը: Ավելորդ է ասել, որ անչափ դժվար էր այդ հասակում գիշերները տասնյակ կիլոմետրերով ճանապարհ գնալը: Գիշերում էինք անձանոթ թուրքերի բակերում, մեր տարած ծածկոցների մեջ փաթաթված: Ես

այդ տարիներին մի քանի անգամ մասնակցել են այդ տաժանակրությունը քվացող ուղևորություններին:

Պակաս դժվար չէր մաս կտվերին գիշերային արտոնի տաները: 12-13 տարեկան հինգ ընկերներով, երեկոյան կովերը կթելուց հետո, տանում էինք հանդերը, որպեսզի արածեն և առավոտները շատ կաթ տան: Գիշերները լուսացնում էինք, ինչպես ասում են՝ ոտքի վրա, բացօթյա, անօթի վիճակում: Այսպիսի ծանր պայմաններում 1941-1942 ուս. տարում, գերազանց գնահատականներով ավարտեցի Դահրավի յոթնամյա դպրոցը:

ՇՈՒՇԻ: ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ (1942-1945 թթ.)

1942 թ. հունիսին մեր մի քանի համադասարանցիներ, 7-րդ դասարանն ավարտելուց հետո, ընդունվեցինք Շուշիի մանկավարժական ուսումնարանի առաջին կուրսը: Քանի որ տարին պատերազմական էր, ընդունելության քննություններ չկային: Մինչև մեր գնալը ուսումնարանի երկրորդ և երրորդ կուրսերում սովորում էին համազյուղացի տասնյակ տղաներ և աղջիկներ, որոնց թվում և քույրս՝ Ռոզան:

Շուշին գտնվում էր մեր գյուղից, կարճ ճանապարհով, 30 կմ հեռավորության վրա: Մեր գյուղից Շուշիի մանկավարժական և գյուղատնտեսական տեխնիկումներում սովորում էին 20-ից ավելի տղաներ ու աղջիկներ: Գյուղ էինք գալիս շաբաթը մեկ անգամ՝ հաց և այլ ուտելիքներ տանելու համար: Գյուղից դուրս էինք գալիս կիրակի օրը, կեսօրից հետո, իսկ զարման և աշման ամիսներին՝ երկուշաբթի առավոտյան, ժամը երեքին, չորսին: Հիշում եմ՝ մի քանի անգամ գյուղից դուրս էինք եկել ու շերտեր, ճանապարհի կեսն անցնելուց հետո, քնել էինք Խնածախի արտերի մեջ և վաղ առավոտյան շարունակել ճանապարհը, որպեսզի հասցնենք առավոտյան ժամը 9-ին ներկայանալ դասին:

Մեր ճանապարհն անցնում էր Բալլուջա (Այգեստան), Խնածախ գյուղերով, Ստեփանակերտի միջով, Ղայբալի գյուղով, և այսպես հասնում էինք Շուշի: Չգիտեմ ինչու, բայց միշտ քայլում էի շարասյան աղջիկից: Մենք նմանվում էինք այն լեռնականներին, որոնք բեռնավորված բարձրանում են լեռների թեք լանջերով՝ գագաթներն ուսումնասիրելու համար: Ստեփանակերտը գտնվում է ծովի մակարդակից 850, իսկ Շուշին՝ միջին 1400 մետր բարձրության վրա: Տեղ էինք հասնում հոգնած, քրտնած ու անմիջապես մտնում դասարան: Երկուշաբթի օրվա դասերը պատրաստում էինք գյուղում, կիրակի օրը:

Տեխնիկումը հանրակացարաններ չուներ և մենք 4-5 հոգով ապրում էինք տեխնիկումի կողմից վարձած թուրքերի անշուք տներում:

Համազյուղացիներով՝ Հայկ Խաչատրյանի, Շուրիկ Ղազարյանի, Ժորա Աբրահամյանի, Սանթուր Քոչարյանի հետ ապրում էինք մի սենյակում:

Շուրիկը, որը ծննդով դահրավեցի էր, բայց ընտանիքի հետ ապրում էր Ստեփանակերտում, լավ նվագում էր: Գիշերները նվագում էր պարի եղանակներ, իսկ համերգի ղեկավարը Հայկ Խաչատրյանն էր: Մթության մեջ ստիպում էր պարել ժամերով: Նրա ասածները կատարում էին բոլորը: Հայկը, որը հետագայում դարձավ հանրահռչակ պատմավիպասան, գյուղից գալիս էր դատարկածեմ, որովհետև ընտանիքն ապրում էր աղքատության մեջ: Գյուղից Շուշի գնալիս միշտ օգնում էր ինձ, իսկ ես ամբողջ շաբաթվա ընթացքում իմ ունեցած մթերքները կիսում էի նրա հետ: Մեր մեջ կար առանձնահատուկ մտերմական կապ, որը շարունակվեց մինչև նրա կյանքի վերջը՝ 2001 թվականը:

Չեմ կարող մի քանի խոսք չասել ուսման, ուսուցիչների, տեխնիկումի մասին: Տեխնիկումի տնօրենն էր Արսեն Խաչատրյանը, որը հմուտ ղեկավար էր: Ուսմասվարը մաթեմատիկայի մասնագետ Սամվել Շինականյանն էր, որից «5» թվանշան ստանալը հազվագյուտ երևույթ էր: Աշխարհագրության ուսուցիչն էր Թեմուր Ամիրջանյանը, մանկավարժության և հոգեբանության ուսուցիչն էր տաճկահայ Սարգիս Ոսկերչյանը:

Ապրում էինք խաբխուլ տներում: Չկար լույս: Տեխնիկումի տնտեսավարից ստանում էինք օրական մի քանի կտոր վառելափայտ, որը հերիքում էր երկու ժամ: Ստիպված գնում էինք, ավերակներից հավաքում չորացած բույսերի հաստ ցողունները, որոնք վառարանում վառելուց տհաճ հոտ էր գալիս:

Պետք է ասեմ, որ ուսանողների բոլոր ծնողներն այդ տարիներին անտարբեր էին իրենց երեխաների նկատմամբ: Մեր գյուղը հարուստ էր անտառներով, տներում կար մեծ քանակությամբ վառելափայտ: Նրանք կարող էին հերթով, ավանակներով վառելու փայտ տեղափոխել իրենց երեխաների համար: Այդ տարիներին ծնեռները խստաշունչ էին, ջուրը տան մեջ սառչում էր: Առավոտները երբեմն առանց լվացվելու էինք գնում դասի:

Տնօրեն Արսեն Խաչատրյանն այդ օրերին տեխնիկումի տղաներին տանում էր քաղաքից 3-4 կմ հեռավորության վրա գտնվող «Պեխի» աղբյուրի շրջակա անտառները, որտեղ կտրում էինք վառելափայտ դասասենյակները տաքացնելու համար, իսկ երկուսական փայտ ստանում էինք կացարանները տաքացնելու համար: Մեզ օրական տալիս էին 400 գ հաց, որն այնքան անորակ էր, որ մզելի, ջուր կթափվեր: Կար ուսանողական ճաշարան, որտեղ ճաշում էին շատ թե քիչ փող ունեցողները: Չճայած այս պայ-

մաններին, մենք սովորում էինք հաջող: Մեր կուրսում կային չորս գերագանցիկներ:

Երկրորդ կուրսում, երբ արդեն ձևավորված պատանիներ էինք, տղաների և աղջիկների մոտ առաջացավ սիրո հակում: Թեև համակրողները շատ էին, բայց ես ընտրեցի նրանցից մեկին՝ մեր կուրսի գերագանցիկ ուսանողուհի Ռոզա Ֆարսյանին, որի նկատմամբ համակրանքը վերածվեց փոխադարձ սիրո:

Տեխնիկումն ավարտելու նախօրյակին ես և Ռոզան պայմանավորվեցինք ուսումը շարունակել Բաքվի բուհերից մեկում, իսկ այն ավարտելուց հետո՝ ամուսնանալ:

Մրանով ավարտվեց Շուշիի հետ կապված իմ կենսագրությունը:

ՄԵՎ ՏԱՐԻ ԲԱՔՎՈՒՄ

1945 թ. հուլիսին, բոլոր առարկաներից գերազանց գնահատականներով ավարտական վկայականը ստանալուց հետո, ես և Ռոզան պայմանավորվեցինք հանդիպել Բաքվում: Հանդիպեցինք օգոստոսի սկզբին և որոշեցինք փաստաթղթերը հանձնել Ադրբեջանի ինդուստրիալ ինստիտուտ:

Քանի որ նոր էր ավարտվել Հայրենական մեծ պատերազմը, ընդունելությունը կատարվում էր պատերազմական տարիներին գործող կարգով՝ գերազանց գնահատականներով միջնակարգ ավարտած դիմորդներն բուհերում ընդունվում էին առանց ընդունելության քննությունների: Ես ընդունվեցի էներգետիկական, իսկ Ռոզան՝ շինարարական ֆակուլտետները:

Ռոզան ապրում էր Նագորնայա փողոցի վրա ապրող իր բարեկամի տանը, իսկ ես՝ Սաբունջի ավանում ապրող, ամուսինը գոհված, չորս որբ երեխաների և մոր հետ ապրող իմ մորաքրոջ աղջկա՝ Լիդայի տանը: Սկսվեցին իմ կենսագրության ամենածանր օրերը. ամենամեծ դժվարությունն այն էր, որ բուհը ռուսական էր, դասախոսությունները վարվում էին ռուսերեն, իսկ ես ռուսերենին համարյա չէի տիրապետում: Մեր կուրսի պարապմունքները երկրորդ հերթի էին, որոնք ավարտվում էին ուշ երեկոյան:

Պատերազմի ավարտից ընդամենը մի քանի ամիս էր անցել, բայց կյանքը պատերազմական տարիների նման էր՝ սով, սպանություններ, գորություններ և այլն:

Ճիշտ է՝ ես վախ չէի գգում: Բայց մի անգամ ուշ երեկոյան նավթաբորգերի միջով գնալիս հանդիպեցի մի աղջկա դիակի, որից հետո այդ արահետով գնալիս համարյա դողում էի:

Գյուղից ինձ համար Լիդայի հասցեով ուղարկում էին փող, սննդա-

մթերքներ, բայց դրանք համարյա լրիվությամբ սպառվում էին այդ տանը, քանի որ ապրում էին աղքատության մեջ:

Ռոզայի հետ հանդիպումները սակավ էին, քանի որ պարապմունքները տարբեր հերթ էին, իսկ բնակության վայրերը միմյանցից շատ հեռու:

Այդպիսի դաժան պայմաններում, ցուցաբերելով ուժեղ կամք, ավարտեցի ինստիտուտի առաջին կուրսը և 1946-ին ամառը եկա գյուղ արձակուրդս անցկացնելու համար: Այլևս ես Բաքու չվերադարձա: Դրանով ավարտվեցին Բաքվի իմ ուսանողական կյանքը և Ռոզայի հետ հանդիպումները:

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՌԻՍՈՒՅՉԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ուսուցչական ինստիտուտը, որը մինչ այդ գտնվում էր Շուշիում, 1946-ին տեղափոխեցին Ստեփանակերտ և տեղավորեցին ներկայիս համար յոթ դպրոցի շենքում: Գյուղում ես մանրամասն պատմեցի ծնողներիս Բաքվում իմ ապրած կյանքի մասին: Նրանք հարց դրին իմ առջև այլևս Բաքու չգնալ և ընդունվել Ստեփանակերտ տեղափոխված ինստիտուտը: Ես համաձայնվեցի, որովհետև այլևս չէի ուզում շարունակել նման ծանր պայմաններում մնալը:

Տեխնիկումի ավարտական վկայականը գտնվում էր Բաքվում: Ատեստատի պատճենով, հարցազրույցի կարգով 1946 թ. սեպտեմբերին ընդունվեցի ռուսաց լեզվի և գրականության նորաբաց ֆակուլտետում: Քանի որ ֆակուլտետի ձևավորման առաջին տարին էր, պարապմունքներն անկանոն էին ընթանում: Չկային տեղական կադրեր: Դասախոսները հիմնականում Բաքվից էին գալիս, ընդհատումներով: Հաշվի առնելով, որ այդ ֆակուլտետը կարող է փակվել, հունվարից հանձնեցի տարբերություններ և տեղափոխվեցի պատմության ֆակուլտետը, որ բավարարված էր դասախոսներով, և դասապարապմունքները նորմալ էին ընթանում: Ստեփանակերտի իմ կենսապայմաններն ահագին առավելություններով տարբերվում էին Բաքվի պայմաններից: Ապրում էի իմ բարեկամ Հռիփսիմե մայրիկի տանը: Սկսեցի եռանդով սովորել և կարճ ժամանակում դարձա 33 ուսանողների մեջ երեք գերազանցիկներից մեկը: Մյուս երկուսը՝ Այդին Պետրոսյանն ու Արևիկ Զարբունյանն էին: Ստանում էինք կրթաթոշակ՝ գերազանցիկները՝ 280 ռուբլի, իսկ մնացածը՝ 240 ռուբլի:

Մտերմացա Արևիկի հետ: Մենք հաճախակի էինք հանդիպում: Բայց տեղի ունեցավ անսպասելի. նա խոստովանեց, որ օրինավոր նշանված է Մարտակերտի դպրոցի Հրաչիկ անունով մի ուսուցչի հետ, գրպանից հանեց նրա նկարը և իմ աչքի առաջ պատռեց ու քափեց գետնին: Այդ երևույ-

քը շատ վատ ազդեց ինձ վրա և դարձավ մեր հանդիպումների վերջակետը: Դա երկրորդ կուրսի սկզբներին էր:

Ինստիտուտի պարապմունքները վերջանալուց հետո ես, հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի առաջավոր ուսանողուհիներ Նինա Մարգարյանը և Անժելա Ղազարյանը, որոնք ապրում էին մեր հարևանությամբ, միասին էինք բարձրանում քաղաքն ի վեր, գրուցելով տարբեր թեմաների շուրջ, կատակներ անում, անեկդոտներ պատմում: Անժելան մեզանից բաժանվելուց հետո, ես և Նինան քայլում էինք միասին, նրան ուղեկցում էի մինչև բնակած տունը, շարունակում իմ ճանապարհը՝ ևս 300 մետր: Նրան տարբեր ֆակուլտետների բազմաթիվ տղաներ սիրո առաջարկություններ էին արել, բայց բոլորին մերժել էր: Ամեն օր միասին քայլում էինք, գնալով փոխվում էր գրույցի բնույթը: Գյուղաբնակ երիտասարդների նման ամոթ-խած չէի, այլ՝ համարձակ, ամեն ինչում հեշտ կողմնորոշվող... Այդ հատկանիշների ձեռքբերմանը նպաստել է Բաքվի մեկ տարվա կյանքը:

Որոշ ջանքեր գործադրելուց հետո, Նինան ընդունեց իմ սիրո առաջարկությունը և համաձայնվեց դառնալու իմ կյանքի ընկերը: Դա 1947 թ. վերջերին էր:

Նինայի քաղաքաբնակ երկրպագուները մի քանի անգամ փորձեցին ինձ վախեցնել, անգամ սպառնացին մահափորձ կատարել, սակայն ապարդյուն: Որոշ ժամանակ անց, նրանք հրաժարվեցին իրենց մտադրություններից:

Երկրորդ կուրսի կեսին էր, որ մենք օրինավոր նշանվեցինք:

Ինստիտուտը հաջող ավարտելուց հետո, 1948 թ. սեպտեմբերի մեկին, Նինային նշանակեցին Նորագյուղի միջնակարգ դպրոցում, որպես՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: Իսկ ինձ՝ Խրամորթի միջնակարգ դպրոցում, որպես՝ պատմության և աշխարհագրության ուսուցիչ:

1948-1949 ուս. տարվա հենց սկզբից էլ և՛ Նինան, և՛ ես դարձանք այդ դպրոցների մանկավարժական ու ծնողական կոլեկտիվների կողմից հարգված ու սիրված մանկավարժները:

Խրամորթից մինչև Նորագյուղ կար միայն հետիոտն ճանապարհ: Նինան ապրում էր Ստեփանակերտցի ուսուցիչներ Ժենյայի և Էմմայի հետ՝ իրենց հատկացված տանը:

Ընդամենը մի քանի անգամ հնարավորություն ունեցա գնալ Նորագյուղ, քանի որ մինչև ուս. տարին վերջանալը, ինձ զինակոչեցին պարտադիր զինվորական ծառայության: Հայրենական պատերազմին մասնակցեցին մինչև 1925 թ. ծնվածները: 1926 թ. ծնվածներին, ռազմականացված ձևով, տեղափոխեցին Բաքու և դարձրին վարորդներ, տրակտորիստներ, շինարարներ, նավթահանքերի աշխատողներ: 1927 թ. ծնվածները, հիմնա-

կանում, մնացին քիկուցրում: Իսկ 1928 թ. ծնվածներին, որոնց թվում և ինձ, 1949 թ. ապրիլին զինակոչեցին պարտադիր զինվորական ծառայության:

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՉՈՐՄ ՏԱԲԻՆԵՐԸ

1949 թ. ապրիլի 20-ին Ստեփանակերտի զինկոմիսարիատի բակում էին գտնվում մոտ 100 զինակոչիկներ քաղաքից և շրջանի գյուղերից, նրանց ճանապարհող ծնողներ, բարեկամներ: Այստեղ էին նաև իմ հարազատները, Նինան՝ իր հարազատների հետ:

Մեզ ուղեկցող կապիտան Բաբայանը հենց այդ օրը ինձ կարգեց որպես օգնական, բոլորի գլուխները խուզել տվեց, բացի ինձնից:

Բեռնատար ավտոմեքենաներով Բաքու հասանք իրիկնադեմին: Հաջորդ օրը այդտեղ ներկայացան սպաներ, մեզնից ընտրեցին մոտ 50 հոգու, որոնց թվում՝ ինձ և ավտոմեքենաներով տեղափոխեցին նոր կառուցվող, երիտասարդ քաղաք Սումգայիթ և տեղավորեցին բարաքներում:

Երեկոյան սպաների ուղեկցությամբ մեզ տարան բաղնիք, որտեղ հանձնեցինք մեր քաղաքացիական հագուստները և ստացանք զինվորական համազգեստ: Հագուստները հանձնելու և նորն ընդունելու գործողությունները վերահսկում էր մի սպա: Երբ ես ստորագրեցի իմ ազգանվան դիմաց, սպան ինձ ասաց. «Վաղը առավոտյան կգաս շտաբ»: Հաջորդ առավոտյան ներկայացա շտաբ: Շտաբի պետ մայոր Չիկիմը կարճատև հարցազրույցից հետո գրեց հրամանը և ինձ նշանակեց ստորաբաժանման գրագիր: Հենց այդտեղ իմացա, որ այդ ստորաբաժանումը մտնում է ներքին գործերի նախարարության մեջ և կատարում է գերմանական ռազմագերիներից և խորհրդային կալանավորներից կազմված ճամբարի հսկողության, կալանավորներին աշխատացնելու և այլ գործառնություններ:

10-20 օր վարժություններ կատարելուց հետո, իմ ընկերներին հանձնեցին հրացաններ և դարձրին ճամբարի շրջակայքում երեք մետր բարձրության վրա կանգնեցված աշտարակների հսկիչներ, իսկ ինձ, որպես՝ շտաբի աշխատակցի, տվեցին «Մակարով» մակնիշի ատրճանակ:

Սպայական կազմը խայտաբղետ էր: Ընդամենը երեք հայ էին, մնացածները մոտ 50-60 հոգի, ռուսներ, ադրբեջանցիներ, ուկրաինացիներ էին՝ սպայական բարձր կոչումներով և ցածր զիտելիքներով:

Ես, շտաբի աշխատանքին զուգահեռ, որպես պրոպագանդիստ, շաբաթը մեկ օր զինվորների հետ և մեկ օր սպաների հետ անց էի կացնում քաղպարապմունքներ քաղաքական թեմաներով և զինվորական կանոնադրությունից: Այդ ժամանակ ես սերժանտ էի, բայց պարապում էի լեյտենանտ-

ների, կապիտանների, անգամ մի քանի մայրների հետ:

Մեկ տարի հետո, առանց սպայական դասընթացների, ինձ շնորհեցին կրտսեր լեյտենանտի սպայական կոչում և նշանակեցին ստորաբաժանման հրամանատարի տեղակալ քաղաքական գծով: Այդ ժամանակ էլ Բաքվի ներքին գործերի քաղաքաժամուր ինձ ընդունեցին ԽՄԿԿ շարքերը:

Մեկ տարի հետո Ադրբեջանի ներքին գործերի նախարար, գեներալ Աբաքիշիևի հրամանով մեր ստորաբաժանումը բաժանեցին երկու մասի՝ ավելի աչքաբաց մոտ 50-60 զինվորների, մի քանի սպաների և ստորաբաժանման պետ՝ փոխգնդապետ Գուլյանցին և ինձ՝ որպես քաղաքական գծով տեղակալի, ուղարկեցին Բաքու-Մոսկվա՝ օպերատիվ և չեկիստական գործողություններ կատարելու համար: Հիշում եմ՝ հաջորդ օրը ինձ մոտ ներկայացավ ավանի ավագը, մի մեծահասակ մարդ և ինձ հայտնեց հետևյալը.

-Ավանի բնակիչները թաթեր են, բոլորն էլ արմախում մարդիկ: Ձգու-
շացրեք զինվորներին, որ չփորձեն անգամ բռնել որևէ աղջկա ձեռքից, այ-
լապես նրա հարազատները իսկույն սրախողխող կանեն նրանց:

Անցան ծառայության երեք տարիները: Ինձ հետ գորակոչված բոլոր տղաներին տուն արձակեցին, ինձնից բացի: Ինձ ընդունելության կանչեց նախարար-գեներալը և հայտնեց հետևյալը. «Ներքին գործերի մեր նախարարությունում աշխատում է 650 սպա, որից ընդամենը 10 հոգի ունեն բարձրագույն կրթություն, սկսած ինձանից: Քեզ տալիս եմ մայրի կոչում, կաշխատես վարչության պետի քաղաքական գծով տեղակալ, իսկ մի քանի ամիս հետո, կլինես իմ տեղակալը: Շուտով բնակարանով կապահովվենք Բաքվում: Մտածիր և մի քանի օր հետո պատասխանիր»:

Ես համառորեն ցանկանում էի վերադառնալ հայրենիք և աշխատել Ստեփանակերտում. աշխատել ոչ թե հանրակրթության, այլ ներքին գործերի համակարգում: Հաջորդ համդիպման ժամանակ գեներալը մի կերպ համաձայնվեց Ստեփանակերտ վերադառնալու և պետական անվտանգության համակարգում աշխատելու որոշմանս հետ:

Կյանքում միշտ, առանձնապես զինծառայության տարիներին, հակում ունեի սպորտի նկատմամբ: Բաքվի «Դինամո» սպորտընկերության անդամ էի: Մասնակցել եմ ֆուտբոլի, թեթև ատլետիկայի, սամբոյի, վոլեյբոլի, շախմատի բազմաթիվ մրցություններին և ունեմ տարբեր կարգեր սպորտի այս կամ այն ձևից:

Ձինվորական ծառայության չորս տարիների ընթացքում ութ անգամ, մեկական շաբաթ տևողությամբ, եկել եմ գյուղ:

ՎԵՐԱԳԱՐՉ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ: ԲԱԿՉԱԼԻ ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեներալի հետ պայմանավորվածության համաձայն՝ 1953 թ. սկզբին ներկայացա ԼՂԻՄ անվտանգության կոմիտեի պետ Վ. Աբրամովի ընդունարանը: Ծանոթանալով իմ ծառայության տարիներին լրացված անձնական գործին, հեշտությամբ ինձ ընդունեց ՊԱԿ-ի համակարգում մայրի հաստիքում աշխատելու (կրտսեր լեյտենանտ էի) որպես՝ ավագ լիազոր: Ունեի չեկիստի որոշակի փորձ, տիրապետում էի ռուսերեն բանավոր և գրավոր խոսքին, որի համար կարճ ժամանակում գովասանքի արժանացավ իմ աշխատանքը:

Ընդամենը մի քանի ամիս էի աշխատել, երբ 1953 թ. մարտի սկզբին ինձ կանչեց գնդապետ Աբրամովը և հարցրեց. «Դուք ամուսնացած չեք, բայց նշանված եք»: Դրական պատասխան տվեցի: Նա նոր հարցեր տվեց. «Դուք նշանված եք Նիմայի՞» հետ»: «Նիման Մարտունու շրջանի Սոս գյուղի ծնո՞ւմդ է»: Հասցնում էի միայն ասել «Այո»: «Նրա հայրը՝ Արշակ Դադայանը որպես կուլակ աքսորվա՞ծ է»: Պատասխանեցի՝ «Չգիտեմ»: Այնուհետև նա ասաց. «Մեր պետական անվտանգության մարմիններում աշխատողը չպետք է ունենա աքսորում կամ կալանքի տակ գտնվող որևէ հարազատ: Եթե ամուսնանաս Նիմայի հետ, դա կարող է հարցականի տակ դնել քո այստեղ մնալը: Սպասիր ընդունարանում, ես հեռախոսով կապվեմ Ադրբեջանի ՊԱԿ-ի նախարար-գեներալի հետ»: Չանցած մի քանի լույս՝ Աբրամովն ինձ նորից կանչեց իր մոտ և ասաց հետևյալը. «Գեներալի ասածով, եթե դու ամուսնանալու ես Նիմայի հետ, այս համակարգում աշխատելն արգելվում է, իսկ եթե չես ամուսնանալու նրա հետ, սպա շարունակիր աշխատել: Գնա, մտածիր և կես ժամից հետո պատասխանիր»:

Ընդունարանում հավաքված սպաները, թեև ամեն կերպ ուզում էին համոզել ինձ, որ ես թողնեմ Նիմային և ամուսնանամ ուրիշի հետ ու շարունակեմ աշխատել, ես համար էի իմ որոշման հետ, մտա պետի մոտ և հայտնեցի, որ ամուսնանալու եմ Նիմայի հետ: Աբրամովը դրանից հետո ասաց, որ այսօրվանից դուք ազատված եք աշխատանքից և այդ մասին ոչ ոքի չասեք: Ձղայնացած, մտայն դեմքով քայլում էի քաղաքի փողոցով, երբ ինձ պատահեց իմ ուսանողական ընկեր Արշավիր Գալստյանը, որն այդ ժամանակ կոմերիտմիության Ստեփանակերտի շրջկոմի քարտուղարն էր: Տեղեկանալով ինձ հետ այդ օրը կատարված դիպվածին, ինձ առաջարկեց միասին գնալ կոմերիտմիության մարզկոմի առաջին քարտուղար, գիտությունների թեկնածու Երվանդ Բաղդասարյանի մոտ՝ մարզկոմի երրորդ քարտուղարի հաստիքը զբաղեցնելու համար:

Ե. Բաղդասարյանը բանավոր հարցադրումներով ծանոթանալով իմ գիտելիքներին, անմիջապես կանչեց քարտուղարուհուն և առաջարկեց պատրաստել փաստաթղթերը Հախումյանին Բաքու ճանապարհելու համար: Օրը ուրբաթ էր, առաջարկեց երկուշաբթի լինել այնտեղ երաշխավորագիր ստանալու համար:

Երկուշաբթի առավոտյան այնտեղ էի: Քարտուղարուհու ուղեկցությամբ, մեկ օրվա ընթացքում, ես եղա կենտկոմի բոլոր բաժինների վարիչների մոտ: Նրանց գերազանց գրավոր երաշխավորագրերով լրացված անձնական գործով ինձ ներկայացրին կենտկոմի առաջին քարտուղար Հաջիևին, որի մոտ էր գտնվում Մոսկվայից եկած Ստարոստինը:

Հաջիևը, ծանոթանալով իմ անձնական կյանքին ու աշխատանքային գործունեությանն առնչվող փաստաթղթերին, ասաց. «Վարաբաղից եկած մեկ արժանի կադր, որին կարելի է վստահել այդ պաշտոնը»: Նա դիմելով ինձ, ասաց. «Միրո՞ւմ ես կուսակցական աշխատանքը»: Ստանալով դրական պատասխան, սեղմեց ձեռքս, շնորհավորեց և առաջարկեց վերադառնալ Ստեփանակերտ և սկսել աշխատել, իսկ փաստաթղթերը կուղարկեն 3-4 օր հետո: Ստեփանակերտում ինձ ընդունեցին ցնծությամբ, քանի որ բազմաթիվ թեկնածությունների մերժումից հետո, վերջապես ընդունվել էր մեկը: Գյուղում երեք օր մնալուց հետո ներկայացա առաջին քարտուղարին աշխատանքն սկսելու համար, կաքինետում նրան տեսա տխուր, մոայլ դեմքով: Նա դիմելով ինձ, հայտնեց հետևյալը. «Քո հարազատներից արքայազնի մարդ կա, որի համար քեզ արգելված է աշխատել կուսակցական մարմիններում»:

Արքայազնի հարազատս համարվում էր Նիկոլայի հայրը: Նրան արքայազն էին Սիբիր որպես կուլակ 1931 թ., երբ Նիկոլայի ընդամենը երկու տարեկան էր և չէր հիշում անգամ դեմքը:

Այդ երկու դեպքերից հետո ես սկսեցի ատել խորհրդային պետությունը, ստալինյան այդ հիմար քաղաքականության կիրառման համար, թեև հավատարիմ կոմունիստ էի:

Որոշ ժամանակ անց, գաղտնի խողովակներով իմացա, որ այդ ամենի հեղինակը Ա. Պ.-ն էր, որն այդ տարիներին աշխատում էր Ստեփանակերտի շրջկոմում, որպես՝ ազիտացիայի և պրոպագանդայի բաժնի վարիչ: Ա. Պ.-ն Ստեփանակերտի և Բաքվի բուհերում սովորել է ինձ հետ միևնույն կուրսում, անգամ Բաքվի պետական քննության ժամանակ իմ կողքին էր նստած, գրավոր քննությունից կտրել էին, միայն նրա սխալներն իմ կողմից ուղղելուց հետո ստացավ դրական գնահատական:

Տարիներ հետո միայն Նիկոլայի պատմեց այդ գաղտնիքի մասին: Երբ ես ծառայում էի բանակում, Ա. Պ.-ն Նորազոյլի դպրոցի դիրեկտորն էր, իսկ

Նիկոլայի հայրը լեզվի և գրականության ուսուցչուհին: Նա մի քանի անգամ առաջարկել է Նիկոլային ամուսնանալ իր հետ և ստացել է բացասական պատասխան: Նիկոլայի անգամ նրան ասել է, որ Սերգեյը շուտ-շուտ է գալիս Վարաբաղ և միշտ գեներով, եթե նրան հայտնի իր տնօրենի նկրտումների մասին, ապա նա կարող է և վերացնել նրան: Այդ զգուշացումն ունեցել էր իր ազդեցությունը, բայց ահա այդ մարդը որոշել էր դիմել հանել: Երբ արդեն շրջկոմի աշխատակից էր, գաղտնի հայտնել էր ՊԱԿ-ի օրգաններին Նիկոլայի հոր արքայազնի մասին և գրկել ինձ այդ պատվավոր պաշտոններում աշխատելուց:

Այդ ամենից հետո ինձ մնում էր անցնել մանկավարժական աշխատանքի:

1953 թ. մարտ ամիսն էր, երբ ինձ հրավիրեցին փոխարինելու Սոնայի դպրոցի տնօրենին: Ես մերժեցի, քանի որ այդ գյուղը գտնվում է մեր գյուղից 50 կմ հեռավորության վրա: Համաձայնվեցի ուսումնական տարվա ավարտին մնացած երեք ամիսներին աշխատել այդ դպրոցում որպես ուսուցիչ այն պայմանով, որ նոր ուսումնական տարում նշանակվեմ Նորազոյլի միջնակարգում, որտեղ Նիկոլայի չորս տարի անընդմեջ աշխատում էր:

Ամուսնությունս պետք է տեղի ունենար 1953 թ. մարտի վերջին, զարմանալիս արձակուրդների օրերին: Կյանքս ընթանում էր տարատեսակ երևույթներով: Այս անգամ էլ տեղի ունեցավ անկանխատեսելին: Մարտի երեքին մահացավ Ստալինը: Ամբողջ Խորհրդային Միությունում սուգ էր: Արգելված էր երաժշտությունը: Հայրս, որը կոլտնտեսության սկզբնական կուսակազմակերպության քարտուղարն էր, դիմեց շրջանի և մարզի կուսակցական օրգաններին հարսանիքի ժամանակ երաժշտություն օգտագործելու թույլտվության հարցով և ստացավ բացասական պատասխան: Դե ինչ, երկուսս էլ կոմունիստներ էինք, ստիպված համաձայնվեցինք և հարսանիքը հետաձգեցինք մինչև Ստալինի մահվան 40 օրը լրանալը: Մեր հարսանիքը վերջապես կայացավ 1953 թ. մայիսի 1-ին: Բոլոր ծախսերը հոգացել են զինծառայության տարիներին իմ տնտեսած գումարով:

**ՆՈՐԱԳՅՈՒՂՈՒՄ
(1953-1958 թթ.)**

1953 թ. սեպտեմբերի մեկին նշանակվեցի Նորագյուղի միջնակարգ դպրոցում, որպես՝ աշխարհագրության, հոգեբանության ուսուցիչ: Նիման այդ դպրոցում աշխատում էր ինստիտուտն ավարտելու առաջին օրվանից (1948) և ուներ առաջավոր ուսուցչուհու համբավ:

Ես 10-րդ դասարանի դասղեկն էի, կազմակերպում էի սպորտային տարբեր մրցություններ գյուղի երիտասարդների և բարձր դասարանցիների մասնակցությամբ և կարճ ժամանակում ձեռք էի բերել բարձր հեղինակություն աշակերտական, ուսուցչական կոլեկտիվներում, բայց չանցած մեկ տարի այստեղ էլ տեղի ունեցավ արտակարգ պատահար. ամառային արձակուրդների օրերին ուսուցիչները և աշակերտները կոլտնտեսության բերքահավաքին օգնելու նպատակով հերթապահություն էին անում դպրոցում: Լավեց հրացանի կրակոց: Արամյանը, որը լավ որսորդ էր, իր լիցքավորված փոքր տրամաչափի հրացանը կախել էր ծառից, աննկատ: Իմ դասարանի արդեն շրջանավարտ Յուրի Սարտիրոսյանը վերցրել էր հրացանը և ուղղել Վ. Օհանջանյանի վրա և սեղմել ձգանը: Մահվան ելքով ողբերգական պատահարի կապակցությամբ տնօրենին ազատեցին աշխատանքից: Ինձ տնօրեն չէին նշանակի, քանի որ այդ դասարանի դասղեկն էի: Նոր տնօրեն նշանակեցին իմ ուսանողական ընկեր Միշա Ջհանգիրյանին:

Այդ գյուղում ծնվեցին մեր առաջին և երկրորդ զավակները՝ Լյուբան և Լյովան: Ես և Նիման երեխաներին պահում էինք հարմարեցված դասացուցակով: Սովորել էի լուսանկարել և ամեն պատեհ առիթով լուսանկարում էի նրանց:

Թղթակցում էի նաև մարզային ու միութենական թերթերին: Իմ առաջին թղթակցությունը տպագրվեց 1946 թ., «Խորհրդային Ղարաբաղ» թերթում: Նորագյուղում աշխատելու տարիներին այդ բնագավառում ավելի մասնագիտացա և դարձա մարզում հրատարակվող հայերեն և ռուսերեն թերթերի հատուկ թղթակից: Եվ իմ մասին գովեստի հոդվածները և զգալի քանակով հոնորարները գնալով ավելի էին ոգևորում ինձ:

Իմ վերջին հոդվածը, որի ծավալը մեկ էջ էր՝ «Ի վերջո կա՞րդարություն, թե ոչ» վերնագրով, տպագրվել է «Դեմո» անկախ թերթում: Երբ հանդիպել եմ, որ համոզիչ փաստերով, քննադատական հոդվածն անգամ ոչ մի տեղաշարժ չի մտցնում մեր համակարգի մեջ, դադարել եմ թղթակցելուց: Դա եղել է 2006 թ., երբ ես 78 տարեկան էի:

1957-ին Նիման երկու երեխաների հետ տեղափոխվեց մեր գյուղի դպրոցը, որտեղ և մեկ տարի հետո նշանակեցին դպրոցի դիրեկտոր: Իսկ

ես մեկ տարի մնացի Նորագյուղի դպրոցում. հաջորդ ուս. տարում աշխատեցի Պատարայի միջնակարգ դպրոցում: 1958-1959 ուս. տարվա նախօրյակին ինձ կանչում են ժողկրթբաժին և ասում հետևյալը. «Ձեր հարևան Մեհտիշեն գյուղի բնակիչները չեն ընդունում իրենց գյուղի դպրոցի տնօրեն Պ. Կարապետյանին և հասցրել են հոգեկան հիվանդություն: Մենք գտնում ենք, որ դուք կարող եք կարգի բերել այդ դպրոցը»:

Ես համաձայնվեցի և 1959-1960 ուս. տարվա սեպտեմբերի մեկին ինձ նշանակեցին Մեհտիշենի դպրոցի տնօրեն: Այդ գյուղը գտնվում էր մեր գյուղից, կարճ ճանապարհով, 2-3 կմ հեռավորության վրա: Իմ առաջին գործը, որից ես սկսեցի, կարգապահության ամրապնդումն էր:

Մեկ շաբաթ անց ես օրակարգի հարց դարձրի մանկավարժների շահադիտական գործողություններին մասնակցելու հարցը: Ուսուցիչները պարբերաբար ու անարգել կաթնամթերքներ, բանջարանոցային մշակաբույսեր և այլ սննդամթերքներ էին վաճառում Ստեփանակերտի շուկայում, օգտվելով իրենց ամուսինների գրադեցրած պաշտոններից: Մեկի ամուսինը գյուղական խորհրդի նախագահն էր, մյուսի ամուսինը կոլտնտեսության գլխավոր գյուղատնտեսը և այլն: Հենց այդ ամուսինների կողմից էր ծեծվել ու հոգեկան հիվանդություն ստացել դպրոցի նախկին տնօրենը:

Երկու շաբաթ անց հրավիրեցի աշակերտների, ուսուցիչների և ծնողների համատեղ ժողով: Այդտեղ որոշում կայացրինք աշակերտներին երեկոյան ժամերին գյուղում երթևեկելը, երեկոյան կինոցուցադրումներին ներկայանալը արգելելու մասին:

Մեկ ամիս շարունակ անձամբ հսկում և պատժում էի ընդունած որոշումը խախտողներին: Եվ դա բավական եղավ, որպեսզի գյուղի հասարակությունը զարմանքից ապշահար, շնորհակալություն հայտնի ինձ այդ անսպասելի փոփոխության համար:

Կարճ ժամանակում ստեղծվեց ամուր կարգապահություն:

Այդ գյուղում ես աշխատել եմ ընդամենը երեք տարի և ձեռք բերել այնպիսի հեղինակություն, որ իմ հոր մահվան արարողությանը մասնակցել է համարյա ողջ գյուղը:

Երեք տարուց հետո ես տեղափոխվեցի մեր գյուղը: Մեհտիշենցիները մի քանի անգամ գրավոր դիմել են կուսընկերներին՝ ինձ նորից իրենց գյուղը վերադարձնելու խնդրանքով, սակայն չի ստացվել:

Այդ տարիներին մեր Դահրավի դպրոցի դիրեկտորն էր իմ կինը՝ Նիման: Մանկավարժական աշխատանքի պրակտիկայում հազվագյուտ է լինում, որ երկու ամուսինները միաժամանակ ղեկավարում են տարբեր մանկավարժական կոլեկտիվներ:

Հայրս մահացավ, ծնվեցին զույգ երեխաներ, ընտանիքը դարձավ բազ-

մանդամ և հոգսաշատ, ուստի 1962 թ. տեղափոխվեցի մեր գյուղը և փոխարինեցի Նինային Դահրավի դպրոցի տնօրենի պաշտոնում, որտեղ անընդմեջ աշխատեցի 22 տարի:

Հաջողվեց վերականգնել դպրոցի կուլեկտիվի համերաշխությունը: Իմ չեկիստական ունակություններն օգնեցին ինձ հեշտությամբ բացահայտելու անանուն նամակների հեղինակներին և մերկացնելու հասարակության առաջ և մանկավարժական կուլեկտիվում:

ՊԱԿ-ի աշխատակիցների օգնությամբ բացահայտել են կեղծած ձեռագրերը և դատավորի կայացրած վճռի համաձայն նամակի հեղինակը և գրողը պետք է ազատազրկվեին երեք տարի ժամկետով, քանի որ նամակում շոշափվում էր նաև մարզկոմի առաջին քարտուղարի հեղինակությունը, սակայն բազմաթիվ միջնորդների խնդրանքով բեկանել տվեցի այդ վճիռը:

1965-ին Հայրենական պատերազմի հաղթանակի 20 ամյակի կապակցությամբ իմ նախաձեռնությամբ, գյուղի հասարակության հետ միասին որոշել էինք գյուղի մուտքում կանգնեցնել գյուղից զոհվածների (118 հոգի) հիշատակին հուշասյուն: Կազմակերպեցի Բաքվում, Մումբայիքում, Երևանում, Մոսկվայում, Ստեփանակերտում և այլ քաղաքներում ապրող դահրավցիներից դրամահավաք և կարճ ժամկետում ստացանք մոտ 40000 ռուբլի: Քանդակագործ Ալբերտ Հարությունյանը, որին 3 ամիս շարունակ պահել ենք մեր տանը, 3 ամսվա ընթացքում պատրաստեց 6 մետր բարձրությամբ մարմարե հուշակոթող, որը մարզում առաջինների շարքին էր դասվում:

Հուշարձանի բացման և աշխատանքների հաջող իրականացման համար իմ նախագահությամբ ընտրեցի հանձնաժողով ամբողջ մանկավարժական կուլեկտիվի մասնակցությամբ:

Բացմանը մասնակցելու համար հրավիրել էինք շրջկոմի, կուսմարզկոմի քարտուղարներին, մարզխորհրդի, շրջխորհրդի նախագահներին ու տեղակալներին, տարբեր թերթերի խմբագիրներին, զենքի հատուկ տեսակներից հրավառություն կատարելու համար 30 զինվորների: Նամակներով հրավիրել էինք տարբեր քաղաքներում ապրող, դրամահավաքին մասնակցած դահրավցիներին, ժողկրթության օրգանների աշխատակիցներին: Արարողությանը մասնակցեցին մոտ 1000 հոգի: Այդ օրը Դահրավը սովորական գյուղի նման չէր: Թմրում էր Ստեփանակերտից հրավիրված երգի ու պարի համույթի հնչեղ ձայնը: Գյուղը ստացել էր տոնական տեսք:

Կարճ ժամկետում, իմ նախաձեռնությամբ կառուցեցինք դպրոցական նոր շենք, կենցաղի տուն 300 մստելատեղով, կուլտուրայի տուն, 3 և 5 կմ հեռավորությունից գյուղ տեղափոխեցինք աղբյուրների ջուրը, աշակերտ-

ների միջոցով գյուղից թթեմու այգի գնացող ճանապարհի երկարությամբ տնկեցինք 300 կեռասենի ծառ և այլն:

Սկսվեցին գովեստի հողվածներ տպագրվել մարզային, հանրապետական թերթերում:

Մեր դպրոցը ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակով քայլում էր շրջանի և մարզի առաջավոր դպրոցների շարքում, բազմիցս առաջնություն է նվաճել մարզային առարկայական օլիմպիադաներում: Այս ամենը դուրս չէր մնում շրջանի և մարզի ղեկավարների տեսադաշտից: Նրանք ինձ պարտադիր մասնակից էին անում առաջավոր տնօրենների համար կազմակերպվող էքսկուրսիաներին և տուրիստական արշավներին, փորձի փոխանակման նպատակով տարբեր դպրոցներում անցկացվող միջոցառումներին:

Ես սիրում էի շրջագայությունները: Ամեն տարի ամառային արձակուրդներին պատրվակ էի գտնում լինելու այս կամ այն քաղաքում, արտասահմանյան երկրներում: Եղել են հարավում՝ Բաթումի և հյուսիսում՝ Լեհինգրադ, արևելքում՝ Աշխաբադ և արևմուտքում՝ Ռիգա քաղաքների միջև գտնվող մի քանի տասնյակ քաղաքներում: Շրջագայել են Ռումինիայի, Հունգարիայի, Չեխոսլովակիայի շատ քաղաքներում: Շրջագայությունների կեսին մասնակցել է նաև Նինան:

Հիշատակության արժանի է 1975 թ. մայիսի 9-ի հաղթանակի 30 ամյակին նվիրված Հայրենական պատերազմի մասնակիցների և հաշմանդամների համար մոտ 300 հոգու մասնակցությամբ հատուկ գնացքով կազմակերպված էքսկուրսիան ԽՍՀՄ հերոս 12 քաղաքները, որին ես մասնակցել են որպես առաջավոր պրոպագանդիստ:

Յուրաքանչյուր հերոս քաղաքում մեզ համար կազմակերպում էին էքսկուրսիաներ քաղաքի տեսարժան վայրերը, ուղեկցի միջոցով տեղեկություններ հայտնում քաղաքի պատմության մասին:

1961 թ. վախճանվեց իմ հայրը: Հիվանդ ժամանակ հորս բուժման նպատակով երեք անգամ Բաքու էի տարել: Պրոֆեսոր Նաջարովը նրան վիրահատել էր, սակայն դրանից հետո ապրել է ընդամենը 5 ամիս:

Իմ մորը տարել են սրտաբան պրոֆեսորի մոտ, քրոջս նույնպես՝ Երևան, պրոֆեսոր Կարապետյանի մոտ, աղջկա՝ Լյուբային՝ Երևան, ակադեմիկոս Ամատունու մոտ և այլն: Այդ հանդիպումներին միջամտել են Բաքվում իմ հորեղբոր տղա Գուրգենը, Երևանում՝ իմ ընկեր, զիտությունների դոկտոր Ալֆրեդ Խաչատրյանը և Մուրեն Ազատյանը:

Ուշադիր էի նաև բարեկամներիս նկատմամբ: Իմ հոր և մոր կողմից տասնյակ բարեկամներ ապրում էին Երևանում, Բաքվում, Ստեփանակեր-

տում: Առանց բացառության մասնակցում էի բոլոր ուրախություններին ու տխրություններին:

1962-ին ծնվեցին մեր գույգ աղջիկները՝ Իրինան և Մարինան: Ես և Նի-
նան դարձանք հինգ զավակների ծնողներ:

Երեխաների խնամքը մորս օգնությամբ կատարում էր Նինան: Նա շատ
աշխատասեր էր, որակյալ ուսուցչուհի, օրինակելի մայր, սիրված անձնավո-
րություն: Անչափ հյուրասեր էր, հարգված, հավատարիմ կին: Նույն հատ-
կանիշներն ուներ նաև քույրս: Երկուսն էլ անժամանակ հեռացան կյանքից:

Եվ այսպես, Մեհտիշենում երեք տարի տնօրինությունից հետո 22 տա-
րի աշխատել եմ իմ հայրենի գյուղում, որպես՝ դպրոցի տնօրեն: Գյուղում
ստեղծել ենք բոլոր հարմարություններն ու հնարավորությունները նորմալ
ապրելու համար: Ունեցել ենք հարուստ տնտեսություն: Պահել ենք կովեր,
խոզեր, ոչխարներ, ձի և այլն, ստեղծել ենք լավ այգիներ, բոստաններ: Այդ
ամենից դուրս ես թերթերից ստանում էի հոնորար, Նինան հարսնացուի և
այլ հագուստներ կարելու համար վաստակում էր գումարներ:

Մեր հինգ զավակները դպրոցն ավարտեցին գերազանց գնահատա-
կաններով, ստացան բարձրագույն կրթություն, կատարեցին կյանքի ընկե-
րոջ ճիշտ ընտրություն, բացառությամբ մեր կրտսեր աղջկա, որը թեև ունի
փափուկ, հարմարվող բնավորություն, բայց թույլ տվեց սխալ, որը ճակա-
տագրական դարձավ ողջ կյանքում:

Մեր ավագ աղջիկը՝ Լյուբան, ունեցավ գույգ տղաներ (Հովիկ, Նորիկ),
որոնք ծնվելուց հետո չորս տարի մնացին մեր տանը և մեծացան առանց
դժվարությունների, Նինայի և իմ մոր օգնությամբ:

Չույգ երեխաներ ունենալը կարծես թե ժառանգական բնույթ է կրում:

Մեր գույգ աղջիկներից հետո ծնվեցին Լյուբայի գույգ տղաները, որոնք
արտակարգ սիրուն էին:

1980 թ. մահացավ նաև մայրս: Երեխաների բուհերում կրթություն ստա-
նալու կապակցությամբ ես համարյա ամեն ամառ գնում էի Բաքու կամ
Երևան, իսկ տան գործերը կատարում էր Նինան:

Ծնվեցին նաև հաջորդ թոռները և դարձան 13-ը:

Դպրոցական գործին զուգահեռ 15 տարի ղեկավարել եմ կոլտնտեսու-
թյան թթահավաքի աշխատանքները, նրան մասնակից դարձնելով ուսուց-
չական կոլեկտիվին և բարձր դասարանների աշակերտներին: Պետք է
նշեմ, որ դա կոլտնտեսության ամենակամտաբեր ճյուղերից էր: 1,5 ամս-
վա ընթացքում հավաքում էինք մոտ 300 տոննա թուփ, որից ստացվում էր
30000 լիտր բարձրորակ օղի:

Նինան և Լյուբան հիվանդացան միևնույն հիվանդությամբ՝ չարորակ
ուռուցք կրծքի վրա: Երկուսն էլ հրաժարվեցին վիրահատվելուց: Եվ 1995 թ.

ապրիլի 24-ին իր ծնված օրը՝ աղջիկս՝ 41 տարեկանում, իսկ 7 օր հետո, իր
ամուսնության օրը (մայիսի մեկին) կինս՝ 67 տարեկանում հրաժեշտ տվե-
ցին երկրային կայքին: Դա կյանքիս ամենադառը և ամենացավալի ժա-
մանակահատվածն էր:

Չորս տարի հետո՝ 1999 թ. ավտովթարից մահացավ իմ ավագ թոռը՝ Հո-
վիկը, 23 տարեկան հասակում:

Մի կողմից այդ անտանելի դժբախտությունները, մյուս կողմից մենա-
կությունը ինձ համար ստեղծել էին տառապալից կյանք: Հովիկի մահով
ավելի խորացավ այդ տառապանքը: Մեր 13 թոռնիկներից մեկը՝ ավագը
պակասեց ու մնացին 12-ը: Նրանք մեկը մյուսից գեղեցիկ, խելոք են, ստա-
ցան բարձրագույն կրթություն և կյանքում քայլում են ճիշտ ճանապարհով՝
ծնողներից ժառանգած գեներին գումարելով իրենց առողջ դատողությունը:
Նրանց մեջ խտացված են մարդկությանը հատուկ ամենաօրինակելի հատ-
կությունները՝ լինել կյանքի սիրահար, ընտանիքի մարդ, հասարակության
լիարժեք անդամ: Մեր ամուսնացած զավակները և թոռնիկները առաջօր,
միմյանց հավատարիմ, ապրում են երջանիկ կյանքով: Նշեմ, որ դա իմ եր-
կարակեցության կարևոր գրավականներից մեկն է: Հաշվի չնստելով հա-
սակիս հետ, ձգտում էի մասնակցել թոռնիկներիս պսակահամդեսներին...

Ծնվեցին նաև ծոռնիկներ: Ոչ հեռու անցյալում մեր թովում զավակնե-
րը դարձան պապիկներ: Թոռնիկների մեջ առանձնահատուկ հատկանիշ-
ներ ունի Հրամուր: Նա ինձ հանդիպելուց, հասունացած մարդու նման հե-
տաքրքրվում է պակաս-պռատով:

Իմ ճակատագրի առանձին դրվագներ կապված են հարազատներիս
նկատմամբ ունեցած արտակարգ հոգատարության հետ: Այսպես.

1983 թ. հիվանդ քույրս՝ Ռոզան, անբուժելի հիվանդությամբ պառկած էր
Երևանի հիվանդանոցում: Նրան խնամելու համար մեկ ամսով Երևան ու-
ղարկեցի Նինային, որին դպրոցում փոխարինող չկար, վատացան իմ և վե-
րադասի հարաբերությունները, որը և դարձավ ինձ տնօրինության պաշտո-
նից գրկելու պատճառը: ՊԱԿ-ի օրգաններից ինձ ազատեցին Նինայի աք-
սորված հոր կապակցությամբ, հորս մահանալով ես ստացա կոկորդի
խալիպ (գոթ) ժամանակավոր հիվանդություն և այլն:

Բոլոր դժվարությունները մնացին հետևում: Ես ինձ երջանիկ մարդ
եմ համարում: Ինչքան հետաքրքիր է այս կյանք կոչվածը: Ոչ երկար ժա-
մանակաշրջան, բայց լի հետաքրքիր, բովանդակալից երևույթներով, որը և
ամփոփվում է «երջանիկ կյանք» հասկացողությամբ:

Հարց է առաջանում: Բոլոր մարդկանց է հաջողվում ապրել երջանիկ
կյանքով: Ոչ: Չէ՞ որ մարդածին են մարդասպանները, անառակները,
մարմնավաճառները և այլ արատներ ունեցող մարդիկ: Դժբախտաբար

մեր մոլորակի վրա գնալով ավելանում է նման մարդկանց քանակը:

Ես չորս տարի ապրեցի մենակության մեջ: Հնարավոր չէ նկարագրել այն դժվարությունները, որոնք ես հաղթահարեցի՝ ապրելով ամենատարրական պայմաններից զուրկ գյուղում:

Պայմանների թելադրանքով, ես որոշեցի գտնել կյանքի նոր ընկեր:

Ծանոթացա Ստեփանակերտի համար երեք ռուսական դպրոցի ուսուցչուհի Լիլիայի հետ, որը 24 տարով փոքր էր ինձանից:

Մեր պայմանավորվածության համաձայն երկու տարի պետք է մնայինք գյուղում, հետո տեղափոխվեինք Ստեփանակերտ՝ մշտական բնակության: Քանի որ գյուղի դպրոցում ռուսաց լեզվի ուսուցչուհի կար, Լիլիան համաձայնվեց դասավանդել անգլերենի ժամերը, որին նա տիրապետում էր, իսկ ես՝ իմ մասնագիտական ժամերը, և գյուղում ապրեցինք երկու տարի, խաղաղ, նորմալ պայմաններում: Երկու տարուց հետո, ըստ պայմանավորվածության, պետք է տեղափոխվեինք Ստեփանակերտ: Լիլիայի հայրը առաջարկեց ապրել իրենց սենյակներից մեկում, որից ես կտրուկ հրաժարվեցի և որոշեցի ունենալ իմ սեփական տունը: 2001-ին մեր հարգարժան Սուրեն Ազատյանի խորհրդով և տրամադրված գումարներով (2000 ԱՄՆ դոլար) գնեցի Թումանյան փողոցի համար 41 սեփական տունը՝ խարխուլ վիճակում: Ամառվա երկու ամիսների ընթացքում կապիտալ վերանորոգման ենթարկեցինք այն, ծախսելով նույնքան գումար իմ խնայողություններից և 2001 թ. սեպտեմբերի մեկին տեղափոխվեցինք քաղաք:

Լիլիան աշխատանքի անցավ իր նախկին՝ համար երեք ռուսական դպրոցում: Նա ունի ընդամենը մեկ աղջիկ՝ համեստ, ասելիքը կշռադատված, խոհեմ, փափուկ բնավորությամբ Սվետլանան, որը ամուսնանալուց հինգ տարի հետո դարձավ երեք երեխաների մայր:

Մարիան մոր պատճենն է՝ խելոք, սիրուն: Լիլիան անչափ հոգատար է իր աղջկա ընտանիքի անդամների նկատմամբ: Նա դարձավ այդ ընտանիքի նյութապես օգնողը, թոռնիկներին խնամողն ու դաստիարակը:

Ստեփանակերտ տեղափոխվելուց հետո ես սկսեցի աշխատել «Բուսաբանական այգի և քաղաքի կանաչապատում» փակ բաժնետիրական ընկերությունում, որպես՝ փոխտնօրեն:

Կարճ ժամկետում ստեղծեցի լավ շրջապատ: Քաղաքի իմ հին ընկերները մտերմացան ինձ հետ, սկսեցին հաճախել մեր տուն, հաճախակի դարձան հանդիպումները շախմատի կենտրոնական տանը: Մի խոսքով՝ ստեղծվեց նոր միջավայրում ապրելու աշխույժ մթնոլորտ:

Ես ակտիվ կապ եմ պահում գյուղի հետ, մասնակցում այնտեղ անցկացվող միջոցառումներին, հնարավորինս նպաստում տնտեսության ճյուղերի զարգացմանը, հաճախում մեր գերեզմանոցը:

Ես որոշել եմ իմ հայրական գերեզմանոցում ամբողջականացնել մեր օջախից նահատակվածների մարմարյա նկարները մեկ ընդհանուր վահանակի վրա և տեղադրել այն հետևի պատի վրա հետևյալ վերտառությամբ.

«Հետնորդներ, ապրեցեք սիրով և միշտ հիշեք մեզ»: Այն իրականացավ 2011 թ. օգոստոսին: Վարպետի ասածով՝ անգամ Ստեփանակերտի գերեզմանոցում չկա նման հուշատախտակ: Մեր օջախի զավակներն ուշադիր են իրենց ծնողների և երեխաների նկատմամբ:

Սակայն ես ուզում եմ բնութագրել նրանցից մեկին՝ Լյուդմիլայի ամուսին Սուրեն Ազատյանին, որը Լյուդայի հետ ամուսնանալով՝ մեր ընտանիքի հետ կապվել է 1976 թվականին:

Հենց առաջին օրվանից զգացիմք, որ Ազատյանի մեջ, որը ծննդով երևանցի է, գիտական բարձր կոչումով, խտացված են հայ մարդու բնավորության լավագույն հատկանիշները: Եվ հուսախաբ չեղանք: Դրա կենդանի ապացույցը մեր բարեկամության 35 տարիներն են: Մեր ընտանիքի հետ կապված բոլոր ուրախությունների ու տխրությունների ամենակտիվ մասնակիցը և հոգացողն է: Եվ ոչ միայն մեր...

Իր մոր հավատարիմ օգնականն էր սկսած ուսանողական տարիներից: Տիկին Սիրուշի, որը ազնվաբար, աշխատասեր, բազմաշնորհ կին է, հետ միասին անմնացորդ կերպով լուծել են իրենց բազմանդամ ընտանիքի հետ կապված բոլոր հարցերը:

Ամեն անգամ Երևան գնալուց անձամբ էր դիմավորում ինձ ավտոկայանում և ուղեկցում իրենց տուն: Շատ դեպքում իմանալով իմ այցելության մասին, նախօրոք ինձ համար գնում էր համերգի, ներկայացման, ցուցահանդեսի և այլ միջոցառումների տոմսեր:

Նա միշտ հոգատար է իմ մյուս զավակների նկատմամբ, որոնք ապրում են Հայաստանում: Օգնում է նրանց բնակարաններով և աշխատանքով ապահովելու, կենցաղային, հոգեբանական բնույթի հարցերին ճիշտ ուղղություն տալու գործում:

Սուրենը լավ գիտի իմ բնավորությունը, որ ես սիրում եմ շրջապայությունները: Նրա անմիջական ջանքերով հաճախել եմ Մ. Մաշտոցի և Հ. Թումանյանի ծննդավայրերը: Ականատես եմ եղել 1988 թ. դեկտեմբերի 7-ի երկրաշարժի ավերածություններին, սկսած էպիկենտրոն Նալբանդ գյուղից վերջացրած մնացած բնակավայրերով:

Սուրենի միջամտությամբ ես ծանոթացա ատոմակայանի (որի գլխավոր տնօրենն էր) ամբողջ կառուցվածքին, նրա հարևանությամբ ՀԵԿ-ին, նորակառույց Դիլիջան-Մուսան թունելին և այլն: Նա այդ ամենն անում էր հաշվի չառնելով իր զբաղվածությունը և ֆիզիկական հոգնածությունը:

Սուրենի աչքից չէր վրիպում հարագատների նկատմամբ ցուցաբերած

բարոյական հոգատարությունը: Առանց ինձ տեղեկացնելու ուղարկել է Ջերմուկի միութենական առողջարանում 24-օրյա հանգստյան ուղեգիր, իսկ 10 օր անց հարազատների մեծ խմբով 3 ավտոմեքենայով տեսության եկել ինձ Ջերմուկում, բարձր ճաշակով կազմակերպել խնջույթ:

Ջերմուկը հանդիսացավ միաժամանակ էքսկուրսիա իր հետ եկած մարդկանց համար: Նրանք մեծ բավականություն ստացան բնության գրկում թաքնված այս գողտրիկ կուրորտավայրից, օգտվեցին համաշխարհային հռչակ ունեցող հանքային ջրի ակունքից:

Փա՛ռք ու պատիվ այդ հիշարժան ու անմոռաց իրադարձության մախաճեռնողին:

1993 թ. պատերազմի ամենածանր օրերին, երբ ամենուր սով էր, խավար, Ստեփանակերտը ռմբակոծվում էր թշնամիների կողմից, մեր ավագ փեսան՝ Բորիսը, որոշել էր իր գույգ տղաներին ու կնոջը տեղափոխել Երևան, ապահովել նրանց կյանքի անվտանգությունը և տղաների համար 10-րդ դասարանն ավարտելու հնարավորություն ստեղծել:

Այդ կարևոր ու դժվարին հարցի լուծումն իր վրա վերցրեց Սուրենը: Չնայած Բորիսը Երևանում ուներ սեփական բնակարաններով ապահովված հարազատ եղբայր ու քույր, այնուամենայնիվ Բորիսի ընտանիքի 3 անդամները տեղափոխվեցին Սուրենի տունը և այնտեղ ապրեցին ուղիղ մեկ տարի: Տղաները դարձան Պուշկինի անվան ռուսական դպրոցի 10-րդ դասարանի աշակերտներ, որտեղ ստացած ավարտականներով ընդունվեցին Ստեփանակերտի պետհամալսարան:

Սուրենի բնավորության ամենալավ հատկանիշներից մեկը բարերարությունն է, հոգատարությունը իր հարազատների նկատմամբ:

35 տարիների ընթացքում ինձ ցույց է տվել ֆինանսական մեծ օգնություն:

Իմ ծննդյան 70 ամյա հոբելյանին նվիրել է ավտոմեքենա:

Վերջապես ամենաանհրաժեշտը, ամենաթանկագինը այն է, որ երբ 1999 թ., տնտեսական պայմաններից ելնելով գյուղից քաղաք պետք է տեղափոխվեի և ապրեի նոր բնակության վայրում, լուծեց Ստեփանակերտում սեփական տուն ունենալու հույժ կարևոր հարցը, տրամադրելով տան ամբողջ արժեքը՝ 2000 դոլար:

Դա բախտորոշ դեր խաղաց իմ հետագա կյանքում: Ես երախտապարտ եմ նրան մինչև կյանքիս վերջը: Ես հաճախ մտորումների մեջ ընկնելուց հարց եմ տալիս ինքս ինձ. ինչու Ս. Ազատյանի հատկանիշներով մարդիկ քիչ են մեր մոլորակի վրա: Չէ որ նրա նման շատ մարդկանց առկայության դեպքում կյանքն ավելի իմաստալից կլիներ, մարդիկ հոգեկան ապրումներ չէին ունենա, լարված կյանքով չէին ապրի, մարդուն տրված առանց այն էլ կարճ կյանքն անբովանդակ չէր անցնի:

ԿՅԱՆՔԻՍ ՀՈՒՇԵՐԻՑ
Ս. Ա. ՀԱՄՈՒՄՅԱՆ, քոչակառու մանկավարժ

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հեղինակը 83 տարեկանում գրավոր շարադրել է իր կյանքի անցած ուղին, գալիք սերունդներին պատգամելով ընդօրինակել հուշերում շարադրված առանձին դրվագները և դառնալ երկարակյացներ ու հայրենիքին պիտանի քաղաքացիներ: Բոլոր դժվարությունները հետևում թողած հեղինակն իրեն երջանիկ մարդ է համարել: Ընթերցողի աչքի առաջ ուրվագծվել է անցյալի ոչ երկար մի ժամանակաշրջան, բայց լի հետաքրքիր, բովանդակալից երևույթներով, որոնք հուշագրողը բնութագրել է «երջանիկ կյանք» ընդհանրական հասկացությամբ:

ИЗ ВОСПОМИНАНИЙ МОЕЙ ЖИЗНИ
С. А. АХУМЯН, педагог-пенсионер

РЕЗЮМЕ

Автор в возрасте 83 лет письменно изложил свой жизненный путь, завещая грядущим поколениям следовать отдельным положениям, изложенным в воспоминаниях, и стать долгожителями и полезными родине гражданами. Оставив за плечами все трудности, автор считает себя счастливым человеком. Перед читателем предстает краткий период прошлого, но насыщенный интересными, содержательными явлениями, которые автор охарактеризовал обобщенным понятием «счастливая жизнь».

RECOLLECTIONS OF MY LIFE
S. A. HAKHUMYAN, teacher – pensioner

SUMMARY

Being 83 years old the author outlined his way of life in written form bequeathing to future generations to follow certain provisions set out in the memories, and become long-lived and useful homeland citizens. Leaving behind all the difficulties, the author considers himself a happy person. The reader is presented a short period of the past, but full of interesting, informative events, which are described by the author with the generalized concept of «happy life».

ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՏՄԱՎԻՊԱՍԱՆ ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՖՈՆԴԻՑ

Պատմավիպասան Հայկ Խաչատրյանը հայրենի Դահրավ գյուղից հեռացել է ուսումնառության նպատակով: Հանգամանքներն այնպես են դասավորվել, որ նա այլևս հայրենի գյուղ վերադառնալու հնարավորություն չի ունեցել: Այստեղից այն թյուր կարծիքն է ձևավորվել, որ իբր պատմավիպասանը նեղացած է եղել իր հայրենակիցներից՝ ոչ համարժեք գնահատականի և վերաբերմունքի պատճառով: Ստորև առաջին անգամ հրապարակվող նամակները, որոնք հասցեագրված են գրողի մանկության և ուսման ընկեր Սերգեյ Հախումյանին, վկայում են, թե ինչպիսի ջերմ սիրով ու անկեղծ մտահոգություններով է կապված եղել Հայկ Խաչատրյանն իր ծննդավայրի և համագյուղացիների հետ:

Բանաստեղծ Սոկրատ Խանյանին հասցեագրված նամակները բացահայտում են «Գրական տեղեկատու» արժեքավոր գրքի հրատարակության նախապատրաստման որոշ մանրամասներ:

Հրապարակվող նամակները մշտական պահպանության են վերցվել «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվում, պատմավիպասան Հայկ Խաչատրյանի ֆոնդում (N 38):

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՅՈՒ. ՅՈՒ.

N 1

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶՈՎԱԾ
ՀԱՄԱԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ՀՈՒՇԱՐՉԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ
ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ՃԱԿԱՏԱԳՐՈՎ ԻՐ ՄՏԱՀՈԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

18 մայիսի 1966 թ.
ք. Երևան

Բարև Սերգեյ

Այսօր քո հասցեով ուղարկեցի 20 (քսան) ռուբլի:

Ես բոլորովին վերջերս իմացա, որ Հայրենական մեծ պատերազմում զոհված մեր գյուղացիների հիշատակին կանգնեցվող հուշարձանի համար հանգանակություն է կատարվել: Ինքս ինձ չեմ ներում, որ այնքան եմ կտրվել գյուղի կյանքից, որ մույնիսկ այդտեսակ նորություններին ամտեղյակ եմ մնում: Ինչևէ... Այդ քսան ռուբլին հանձնիր ըստ պատկանելվույն,

կարծեմ՝ առանձին հանձնաժողով կա, գուցե՝ նրան:

Ես լսեցի, որ այդ հուշարձանի հանդիսավոր բացումը պետք է տեղի ունենար մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը: Բայց հետաձգվեց: Չնայած շատ կուզենայի ներկա լինել, բայց հավանաբար չկարողանամ գալ գործերի բերումով: Բոլոր դեպքերում խնդրում եմ գրել, թե երբ է բացման օրը, այնուամենայնիվ գուցե հաջողվի ինձ թեկուզ մեկ օրով գյուղ գալ:

Այժմ մի կարևոր հարց: Մեր գյուղի երիտասարդներից շատերը, հատկապես՝ մտավորականները, աշխատում ու ապրում են տարբեր վայրերում: Դու ավելի մեծ հայրենասեր ես գտնվել ու մնացել ես գյուղում: Բոներկայությունը գյուղում միայն դպրոցի դիրեկտորի պարտականություններով չի սահմանափակվում: Դու, այսպես ասած, դարձել ես Դահրավի հոգևոր հայրը, հետևապես պարտավոր ես ցիրուցան եղած նրա զավակներին կապել գյուղի հետ, տեղյակ պահել հայրենի օջախի նորություններին:

Գուցե լավ չշարադրեցի իմ մտքերը, բայց դու կհասկանաս:

Այսքանը.

Բարևներով՝ Ձեր Հայկ Խաչատրյան

«Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 38, գ. 1, թ. 3: Բնագիր: Ձեռագիր:

N 2

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԲՈՂՈՔԸ ՀԱՅՐԵՆԻ ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ
ՔԱՆԳՄԱՆ ԴԵՄ

29 դեկտեմբերի 1966թ.
ք. Երևան

Բարև Սերյոժա

Ես նորից շնորհավորում եմ քո Նոր տարին:

Բո երկրորդ նյութը պատրաստ է և հարմար առիթով կտալագրենք: Այդ քեմայով հիմա մի քիչ ... (պիտի որ ինքդ հասկանաս):

Ընդհանրապես լավ է, որ դու կապվում ես մեր թերթի հետ: Նախապես ասեմ, որ դու գրում ես գրագետ, ժուռնալիստական ըմբռնումով և հավոր պատշաճի: Դու շարունակիր գրել մեզ:

Երկու օր առաջ ինձ մոտ եկավ Աբելը (Հովհաննես Մամվելյանի տղան): Նա պատմեց, որ կոլտնտեսության նախագահի կարգադրությամբ քանդել են մեր գյուղի եկեղեցին: Եթե դա ճշմարտություն է, ապա չկա ավելի մեծ բարբարոսություն: Չէ որ այդ շենքը պատմական հնություն է և այդպիսի հուշարձանները քանդելու համար մարդկանց պատժում են:

Այդ լուրը ինձ վրա ցնցող տպավորություն թողեց: Մի՞թե նոր ակումբ կառուցելու համար ուրիշ տեղ չգտան: Եվ ինչպե՞ս հանդուրժեցիր դու, Հախումյանների տոհմի ժառանգող, որ քանդեն մեր եկեղեցին:

Կներես իմ այս խիստ խոսքերի համար: Մեր համագյուղացիները քեզ դիտում են որպես հոգևոր հայր և դու պարտավոր ես նաև լսել կշտամբանքի խոսքեր:

Ներիր ինձ նորից: Շնորհավորում եմ քո տիկնոջ, երեխաների Նոր տարին:

Հայկ Խաչատրյան

«Կանառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. 38, գ. 1, ք. 5: Բնագիր: Մերենագիր:

